



ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ - ԺՆՆԵՒ

**ASSOCIATION DES DAMES
ARMENIENNES - GENEVE**

ԱՐԶԱԳԱՆԳ - ARTZAKANK

Ժրնս, 14 Հոկտեմբեր 2011

Յարգելի Սփիւռքի նախարար Տիկին Հակոբյան,

Այս գրութեամբ կու գանք մեր գնահատանքի խօսքն ու շնորհակալութիւնները յայտնել Ձեզի և Ձեր աշխատակիցներուն, սեպտեմբեր 19-20-ին կայացած՝ Սփիւռքի կազմակերպութիւններու ներկայացուցիչներու և համայնքներու ղեկավարներու համահայկական համաժողովին առթիւ, որուն մասնակցելու պատիւն ու հաճոյքը վայելեցինք:

Մեծ հետաքրքրութեամբ ու գոհունակութեամբ հետեւեցանք համահայկական առաջնահերթութիւններու և Հայաստան-Արցախ-Սփիւռք արդիւնաւէտ գործակցութեան հեռանկարներու մասին տեղի ունեցած բովանդակալից քննարկումներուն: Կ'արժէ նշել, որ Նախարարութեան աշխատակազմին կողմէ կատարուած կազմակերպչական բժախնդիր աշխատանքն ալ մեծապէս սատարեց Համաժողովի յաջողութեանը: Համաժողովին աւրընթեր, բարեբախտութիւնը ունեցանք մասնակցելու Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակի առթիւ տեղի ունեցած զանազան միջոցառումներուն ու բաժնեկից դառնալ համազգային աննախընթաց տօնախմբութեան:

Կը յուսանք ու կը մաղթենք, որ համաժողովին ընթացքին սահմանուած համազգային առաջնահերթութիւնները և հետագայ համատեղ աշխատանքներու մասին ընդունուած յայտարարութիւնը յետ այսու հիմքը կը հանդիսանան Հայաստան-Սփիւռք գործակցութեան: Կը մաղթենք նաեւ, որ Սփիւռքի կազմակերպութիւնները իմաստութիւնը կ'ունենան մեկդի դնել իրենց ներհամայնքային ու տեղական տարակարծութիւնները և որդեգրել՝ աւելի Հայաստանակեդրոն ու հայադարձութիւնը խթանող գործելակերպ մը:

Յարգանօք՝

Մարալ Սիմսար
Հասմիկ Մելիքսեթյան
ԱՐԶԱԳԱՆԳ երկամսեայ